ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՊԱՐՈՆ Է. ԲԶՆՈՒՆՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ընտանիքի սոցիալական գնահատման բաժնի փորձագետ Աննա Դավթյանի՝ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ.

- Պատրաստել եմ քաղաքացիների՝ այդ թվում առցանց ստացված դիմումների, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմից, այլ գերատեսչություններից և կազմակերպություններից ՀՀ ԱՍՀՆ հասցեագրված գրությունների պատասխաններ,
- Պատրաստել եմ սոցիալական գնահատման բնագավառը կարգավորող օրենսդրությանը վերաբերող գրությունների պատասխանների նախագծեր,
- Կազմել եմ մի շարք պաշտոնական գրությունների, զեկուցագրերի նախագծեր՝ նախարարություններ, գերատեսչություններ և կազմակերպություններ ներկայացնելու համար,
- Մասնակցել եմ ինտեգրման և վերաինտեգրման հարցերով միջազգային և տեղական դասընթացների, գիտաժողովների, աշխատանքային քննարկումների,
- Մասնակցել եմ «Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքները համակարգող

միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստին և իրականացվող աշխատանքներին,

- Իրականացրել եմ Միասնական սոցիալական ծառայության անձնակազմի վերապատրաստման դասընթացներ «Սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները փախստականների հետ» թեմայով,
- Կատարել եմ «ՀՀ-ում փապստական ճանաչված անձանց բնակարանային ապահովության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի N 1711-Ն որոշմամբ հաստատված միջոցառման իրականացման ուղղությամբ աշխատանքներ,
- Համակարգել եմ պետության կողմից տրամադրված ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց հասարակական կազմակերպությունների կողմից հոգեսոցիալական աջակցության տրամադրմանն առնչվող աշխատանքները,
- Մասնակցել եմ «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման ենթակա սոցիալական տներում ժամանակավոր կացարանի հատկացման նոր ընթացակարգի մշակման աշխատանքներին,
- Համակարգել եմ «ՀՀ միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2025-2035 թվականների ռազմավարության» վերանայման համատեքստում իրականացվող աշխատանքները,
- Բաժնի պետի հանձնարարությամբ կատարվել են բաժնի գործառույթներից բխող այլ աշխատանքներ:

Ընտանիքի սոցիալական գնահատման
բաժնի փորձագետ՝ Աննա Դավթյան